



ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՄԻՈՒԹՅԱՆ  
**ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ**  
(ՀԻՄՆԱԿԱՆ ՈՐԵՆՔԸ)

Պ Ե Տ Տ Հ Ա Տ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԲԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ • 1938

342/4)  
1u-II

01 MAR 2010

342/~~447~~  
no-11

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՒ

05 FEB 2011

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՄԻՈՒԹՅԱՆ  
**ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ**  
(ՀԻՄՆԱԿԱՆ ՈՐԵՆՔԸ)

Պ Ե Տ Հ Ր Ա Տ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ • 1938

11 SEP 2013

34708

# КОНСТИТУЦИЯ (Основной Закон) Союза ССР (На армянском языке)

Госиздат— Издательство полит. литературы  
Ереван, 1938

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Սահմանադրության (Հիմնական Որենքի) հրապարակմաղ տեքստը պարունակում է այն փոփոխություններն ու լրացրումները, վորոնք ընդունված են ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Առաջին նստաշրջանի կողմից 1938 թ. հունվարի 15-ին:



2936

Հայերեն թարգմ. Խմբագրեց Տ. Ալեքսանյան  
Տեխնիկական խմբագրեց Ս. Խաչատրյան  
Մրբագրել է Հ. Մանվելյան  
Կոնսուլու պրագրի Լ. Արավան

Դաշտավայրի լիազոր № Կ-3279, հրատ. № 572, պատվեր № 79,  
Տիրաժ 15.000

Հանձնված ե ազտաղը լության 27/IV 1938 թ.  
Ստորագրված ե ապագրելու 10/V 1938 թ.  
Տիկ Ա. Խ.

**Պատմաբան**՝ Քաղաքական գրականության հրատարակչության տպարան,  
Երևան, Ասմալեռունի, № 65.

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՅԻԱԼԻՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՄԻՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ (ՀԻՄՆԱԿԱՆ ՈՐԵՆՔԸ)

Գ Լ Ռ Խ Խ Խ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ՀՈԴՎԱԾ 1. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը բանվորների և գյուղացիների սոցիալիստական պետություն է:

ՀՈԴՎԱԾ 2. ԽՍՀՄ քաղաքական հիմքն են կազմում աշխատավորների պատգամավորների Խորհուրդները, վորոնք աճել ու ամրապնդվել են կարլածատերերի ու կապիտալիստների իշխանությունը տապալելու և պրոլետարիատի դիկտատորան նվաճելու հետեանքով:

ՀՈԴՎԱԾ 3. ԽՍՀՄ-ում ամբողջ իշխանությունը պատկանում է քաղաքի և գյուղի աշխատավորներին՝ հանձինս աշխատավորների պատգամավորների Խորհուրդների:

ՀՈԴՎԱԾ 4. ԽՍՀՄ տնտեսական հիմքն են կազմում տնտեսության սոցիալիստական սիստեմը և արտադրության գործիքների ու միջոցների սոցիալիստական սեփականությունը, վորոնք հաստատվել են տնտեսության կապիտալիստական սիստեմի լիկվիդացիայի, արտադրության գործիքների ու միջոցների մասնավոր սեփականության վերացման և մարդու կողմից մարդու չահագործումը վոչնչացնելու հետեանքով:

ՀՈԴՎԱԾ 5. ԽՍՀՄ-ում սոցիալիստական սեփականությունն ունի կամ պետական սեփականության ձև (համաժողովրդական ունեցվածք), կամ կոռպերատիվ-կոլտնտեսային սեփականության ձև (առանձին կոլտնտեսությունների սեփականություն, կոռպերատիվ միավորումների սեփականություն):

ՀՈԴՎԱԾ 6. Հողը, նրա ընդերքը, ջրերը, անտառները, գործարանները, Փաբրիկաները, հանքահորերը, հանքերը, յերկաթուղային, ջրային ու ողային տրանսպորտը, բանկերը, կապի միջոցները, պետության կազմակերպած գյուղատնտեսական խոշոր ձեռնարկությունները (խորհունտեսությունները, մեքենատրակտորային կայանները և այլն), ինչպես նաև կոմունալ ձեռնարկությունները և բնակարանային հիմնական ֆոնդը քաղաքներում ու արդյունաբերական կետերում, պետական սեփականություն, այսինքն՝ համաժողովրդական ունեցվածք են:

ՀՈԴՎԱԾ 7. Կոլտնտեսությունների ու կոռպերատիվ կազմակերպությունների հանրային ձեռնարկություններն իրենց կենդանի ու մեռյալ ինվենտարով, կոլտնտեսությունների և կոռպերատիվ կազմակերպությունների կողմից արտադրվող արտադրանքը, ինչպես նաև նրանց հանրային շինությունները, կազմում են կոլտնտեսությունների ու կոռպերատիվ կազմակերպությունների հանրային, սոցիալական սեփականությունը:

Յուրաքանչյուր կոլտնտեսականի տնտեսություն, բացի կոլտնտեսային հանրային տնտեսությունից ստացած հիմնական յեկամուտից, անձնական ողտագործման համար ունի վոչմեծ տնամերձ հողամաս և վորպես անձնական սեփականություն՝ ոժանդակ տնտեսություն տնամերձ հողամասում, բնակելի տուն, մթերատու անասուններ, թռչուններ և գյուղատնտեսական մանր ինվենտար՝ գյուղատնտեսական արտելի կանոնադրության համաձայն:

ՀՈԴՎԱԾ 8. Կոլտնտեսությունների գրաղեցրած հողն ամրացվում է նրանց՝ անվճար և անժամկետ ողտագործելու համար, այսինքն՝ առհավետ:

ՀՈԴՎԱԾ 9. Տնտեսության սոցիալական սիստեմի հետ միասին, վորը հանդիսանում է տնտեսության տիրապետող ձեւ ԽՍՀՄ-ում, որինքով թույլատրվում է մենատնտես գյուղացիների ու տնայնադրների մանր մասնավոր տնտեսություն, վորը հիմնված է անձնական աշխատանքի վրա և բացառում է ուրիշի աշխատանքի շահագործումը:

ՀՈԴՎԱԾ 10. Քաղաքացիների անձնական սեփականու-

թյան իրավունքը՝ նրանց աշխատավորական յեկամուտների ու խնայությունների նկատմամբ, բնակելի տան և տնտելին ոժանդակ տնտեսության նկատմամբ, տնային տնտեսության և առողյա գործածության առարկաների նկատմամբ, անձնական սպառման ու հարմարության առարկաների նկատմամբ, ինչպես նաև քաղաքացիների անձնական սեփականության ժառանգելու իրավունքը—պահպանվում են որևէնքով:

ՀՈԴՎԱԾ 11. ԽՍՀՄ տնտեսական կյանքը վորոշում. Ենրան ուղղություն ե տալիս պետական ժողովրդատնտեսական պլանը՝ հոգուտ հանրային հարստության ավելցման, աշխատավորների նյութական ու կուլտուրական մակարդակի անշեղ բարձրցման, ԽՍՀՄ անկախության ամրացման և նրա պաշտպանունակության ուժեղացման:

ՀՈԴՎԱԾ 12. ԽՍՀՄ-ում աշխատանքը աշխատանքի ընդունակ յուրաքանչյուր քաղաքացու պարտականությունը և պատվի գործն ե՝ համաձայն «ով չի աշխատում, նա չի ուտում» սկզբունքի:

ԽՍՀՄ-ում իրականացվում է սոցիալիզմի սկզբունքը՝ «յուրաքանչյուրից ըստ նրա ընդունակության, յուրաքանչյուրին՝ ըստ նրա աշխատանքի»:

#### Գ Լ Ո Ւ Խ Ի Պ

#### ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒԽՎԱԾՔԸԲԸ

ՀՈԴՎԱԾ 13. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Սիությունը միութենական պետություն է՝ կազմված հետեւյալ իրավահայտապար Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների կամավոր միավորման հիմունքով՝

Ոռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության.

Ուկրաինական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության.

ԲԵԼՈՌՈՒՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈԳԻԱԼԻՍՏՈՎԱԿԱՆ ՀԱՆՐԱ-  
ՊԵՏՈՒԹՅԱՆ.

ԱԴՐԵՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈԳԻԱԼԻՍՏՈՎԱԿԱՆ ՀԱՆՐԱ-  
ՊԵՏՈՒԹՅԱՆ.

ՎՐԱՋԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈԳԻԱԼԻՍՏՈՎԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵ-  
ՏՈՒԹՅԱՆ.

ՀԱՅԼԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈԳԻԱԼԻՍՏՈՎԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵ-  
ՏՈՒԹՅԱՆ.

ԹՌԱՔՄԵՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈԳԻԱԼԻՍՏՈՎԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵ-  
ՏՈՒԹՅԱՆ.

Ուզբեկական ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈԳԻԱԼԻՍՏՈՎԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵ-  
ՏՈՒԹՅԱՆ.

ՏԱԶԲԻԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈԳԻԱԼԻՍՏՈՎԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵ-  
ՏՈՒԹՅԱՆ.

ՂԱՊԱԽԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈԳԻԱԼԻՍՏՈՎԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵ-  
ՏՈՒԹՅԱՆ.

ԿԻՐՊԻՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈԳԻԱԼԻՍՏՈՎԱԿԱՆ ՀԱՆՐԱ-  
ՊԵՏՈՒԹՅԱՆ:

ՀՐԴՎԾԾ 14. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈԳԻԱԼԻՍՏՈՎԱԿԱՆ ՀԱՆՐԱ-  
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆը, ՀԱՆՁԻՆԱ  
ԻՉԽԱՆՈՒԹՅԱՆ ՆՐԱ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՐմԻՆՆԵՐԻ և պԵՏՈՎԱԿԱՆ  
ԿԱռավարման մարմինների, յԵՆԹԱԼԱ յԵՆ՝

ա) ՄԻՈՒԹՅՈՒՆԸ միջազգային հարաբերություններում  
ներկայացնելը, այլ պԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ հետ պայմանագրեր  
կնքելն ու նրանց ռատիֆիկացիան.

բ) պատուեազմի ու խաղաղության հարցերը.

դ) ԽՍՀՄ կազմի մեջ նոր հանրապետություններ ըն-  
դունելը.

դ) ԽՍՀՄ Սահմանադրության կատարման վերահսկո-  
ղությունը և ԽՍՀՄ Սահմանադրությանը՝ միութենական  
հանրապետությունների Սահմանադրությունների համա-  
պատասխանությունն ապահովելը.

ե) միութենական հանրապետությունների միջև սահ-  
մանների փոփոխությունների հաստատումը.

զ) միութենական հանրապետությունների կազմում նոր

յերկրամասեր և մարզեր, նույնագես և նոր ավտոնոմ հան-  
րապետություններ կազմելու հաստատումը.

ը) ԽՍՀՄ պաշտպանության կազմակերպումը և ԽՍՀՄ  
բոլոր զինված ուժերի ղեկավարումը.

թ) արտաքին առևտուրը՝ պետական մենաշնորհի հի-  
մունքով.

ժ) պետական անվտանգության պահպանությունը.

ի) ԽՍՀՄ ժողովրդատնտեսական ոլանների սահմանու-  
մը.

լ) ԽՍՀՄ միասնական պետական բյուջեյի հաստատու-  
մը, ինչպես նաև միութենական, հանրապետական ու տե-  
ղական բյուջեներ կազմելու համար ստացվող հարկերի և  
յեկամուտների հաստատումը.

լի) ընդհանուրմիութենական նշանակություն ունեցող  
բանկերի, արդյունաբերական ու գյուղատնտեսական հիմ-  
նարկների ու ձեռնարկությունների, ինչպես նաև առևտրա-  
կան ձեռնարկությունների կառավարումը.

ծ) տրանսպորտի ու կապի կառավարումը.

դ) գրամական ու վարկային սիստեմի ղեկավարումը.

է) պետական ապահովագրության կազմակերպումը.

ձ) փոխառություններ կնքելն ու տալը.

ղ) հողոգտագործման, ինչպես նաև ընդերքի, անտառ-  
ների ու ջրերի ոգտագործման հիմնական սկզբունքների  
սահմանումը.

ճ) լուսավորության ու առողջապահության բնագա-  
վառներում հիմնական սկզբունքների սահմանումը.

մ) ժողովրդատնտեսական հաշվառման միասնական  
սիստեմի կազմակերպումը.

յ) աշխատանքի որենսդրության հիմունքների սահմա-  
նումը.

ն) դատարանակազմության և դատավարության ո-  
րենսդրությունը. քրեական ու քաղաքացիական որենսդր-  
քերը.

չ) միութենական քաղաքացիության վերաբերյալ ո-  
րենքները. ոտարերկրացիների իրավունքների վերաբերյալ  
որենքները.

ո) ամնիստիայի մասին ընդհանուր-միութենական ակտերի հրատարակումը:

ՀՈԴՎԱԾ 15. Միութենական հանրապետությունների սուվերենիտետը սահմանափակված է միայն ԽՍՀՄ Սահմանադրության 14-րդ հոդվածում մատնանշված չըջունակներով։ Այդ չըջանակներից գուրս յուրաքանչյուր Միութենական հանրապետություն պետական իշխանությունն իրականացնում է ինքնուրույն կերպով։ ԽՍՀՄ պահպանում և միութենական հանրապետությունների սուվերենի իրավունքները։

ՀՈԴՎԱԾ 16. Յուրաքանչյուր Միութենական հանրապետություն ունի իր Սահմանադրությունը, վորը հաշվի յի առնում հանրապետության առանձնահատկությունները և կառուցված ե ԽՍՀ Միության Սահմանադրությանը լիովին համապատասխան։

ՀՈԴՎԱԾ 17. Յուրաքանչյուր Միութենական հանրապետության իրավունք և վերապահվում աղաստ կերպով գուրս գալու ԽՍՀՄ-ից։

ՀՈԴՎԱԾ 18. Միութենական հանրապետությունների տերիտորիան չի կարող փոփոխվել առանց նրանց համաձայնության։

ՀՈԴՎԱԾ 19. ԽՍՀՄ որենքները միատեսակ ուժ ունեն բոլոր միութենական հանրապետությունների տերիտորիայում։

ՀՈԴՎԱԾ 20. Միութենական հանրապետության որենքի և ընդհանուր-միութենական որենքի միջև տարածայնություն լինելու դեպքում գործում է ընդհանուր-միութենական որենքը։

ՀՈԴՎԱԾ 21. ԽՍՀՄ քաղաքացիների համար սահմանվում է միասնական միութենական քաղաքացիություն։

Միութենական հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի հանդիսանում է ԽՍՀՄ քաղաքացի։

ՀՈԴՎԱԾ 22. Բուսասատանի Խորհրդային ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետությունը բաղկացած է՝ Ալիքայի, Հեռավոր-Արևելյան, Կրասնոդարի, Կրասնոյարսկի, Որչոնիկի իշխանություններով։ Արխանգելսկի, Վոլոդա-

յի, Վորոնեժի, Գորկու, Իվանովոյի, Իրկուտսկի, Կալինինի, Կիրովի, Կույբիշևի, Կուրսկի, Լենինգրադի, Մոսկվայի, Նովոսիբիրսկի, Ռմանի, Ռենբուրգի, Ռյազանի, Ռոստովի, Ռյազանի, Սարատովի, Սվերդլովսկի, Սմոլենսկի, Տիտայի, Յարովագրադի, Տամբովի, Տուլայի, Չելյաբինսկի, Չիտայի, Յարովալավիլի մարզերից։ Թաթարական, Բաշկիրական, Դաղստանի, Բուրյաթ-Մոնղոլական, Կաբարդինո-Բալկարական, Կալմիկական, Կարելական, Կոմի, Ղրիմի, Մարիական, Մորդվական, Մերձվոլգյան Գերմանացիների, Հյուսիսային-Ռուսական, Շուղմուրտական, Զեչենո-Խնդուշական, Չուվաշական, Յակուտական ավտոնոմ մարզերից։

ՀՈԴՎԱԾ 23. Ուկրաինական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը բաղկացած է՝ Վիննիցայի, Դնեպրովսկետրովլակի, Դոնեցի, Ժիտոմիրի, Կամենեց-Պոդոլսկի, Կիեվի, Նիկոլայևի, Ուկրասայի, Պոլտավայի, Խարկովի, Զերնիգովի մարզերից և Մոլդավական Ավտոնոմ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունից։

ՀՈԴՎԱԾ 24. Ադրբեյջանական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության մեջ մտնում են՝ Նախիճեանի Ավտոնոմ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը և Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ մարզը։

ՀՈԴՎԱԾ 25. Վրացական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության մեջ մտնում են՝ Աբխազական ԱԽՍՀ, Աջարական ԱԽՍՀ, Հարավ-Ռուսական ավտոնոմ մարզը։

ՀՈԴՎԱԾ 26. Ուզբեկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը բաղկացած է՝ Բուխարայի, Սամարկանդի, Տաշքենդի, Ֆերգանայի, Խորեզմի մարզերից և Կարա-Կալակալական Ավտոնոմ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունից։

ՀՈԴՎԱԾ 27. Տաջիկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության մեջ մտնում է Լեռնային Բաղախչանի ավտոնոմ մարզը։

ՀՈԴՎԱԾ 28. Ղաղախական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը բաղկացած է՝ Ակտյուբինսկի, Ալմա-Աթայի, Արևելյան Ղաղախատանի, Գուրյեվի, Արևմտյան Ղաղախատանի, Ղարագանդայի, Կղզլ-Որդայի, Կուստանայի, Պավլոդարի, Հյուսիսային Ղաղախատանի, Հարավային Ղաղախատանի մարզերից:

ՀՈԴՎԱԾ 29. Բելոռուսական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը բաղկացած է՝ Վիտեբսկի, Գոմելի, Մինսկի, Մոգիլյովի, Պոլեսյեյի մարզերից:

### Գ Լ Ո Ւ Խ Ի Ի Ի

ԽՈՐՀՈԴՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ-  
ՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ  
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՑՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 30. ԽՍՀՄ պետական իշխանության բարձրագույն մարմինը ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդն է:

ՀՈԴՎԱԾ 31. ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդն իրականացնում է Սահմանադրության 14-րդ Հոդվածով Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությանը վերապահված բոլոր իրավունքները, ինչ չափով վորանք, համաձայն Սահմանադրության, չեն մտնում ԽՍՀՄ Գերագույն Խորհրդին հաշվետու՝ ԽՍՀՄ մարմինների—ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահության, ԽՍՀՄ ժողովրդական կոմիսարների Խորհրդի և ԽՍՀ Միության ժողովրդական կոմիսարիաների իրավասության մեջ:

ՀՈԴՎԱԾ 32. ԽՍՀՄ որենսդրական իշխանությունն իրականացնում է բայցառապես ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդը:

ՀՈԴՎԱԾ 33. ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդը բաղկացած է յերկու պալատից—Միության Խորհրդից և Ազգությունների Խորհրդից:

ՀՈԴՎԱԾ 34. Միության Խորհուրդն ընտրում են ԽՍՀՄ քաղաքացիներն ըստ ընտրական ուղղուղների՝ 300 հազարնակից մի պատգամավորի նորմայով:

ՀՈԴՎԱԾ 35. Ազգությունների Խորհուրդն ընտրում են ԽՍՀՄ քաղաքացիներն ըստ միութենական և ավտոնոմ Հանրապետությունների, ավտոնոմ մարզերի ու ազգային ուղղուղների, հետեւյալ նորմայով. 25-ական պատգամավոր յուրաքանչյուր միութենական Հանրապետությունից, 11-ական պատգամավոր յուրաքանչյուր ավտոնոմ Հանրապետությունից, 5-ական պատգամավոր յուրաքանչյուր ավտոնոմ մարզից և 1-ական պատգամավոր յուրաքանչյուր ազգային ուղղուղից:

ՀՈԴՎԱԾ 36. ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդն ընտրվում է չորս աարի ժամանակով:

ՀՈԴՎԱԾ 37. ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի յերկու պալատն ել՝ Միության Խորհուրդը և Ազգությունների Խորհրդը, իրավահավասար են:

ՀՈԴՎԱԾ 38. Միության Խորհրդին և Ազգությունների Խորհրդին հավասար չափով պատկանում է որենսդրական նախաձեռնությունը:

ՀՈԴՎԱԾ 39. Որենքը հաստատված է համարվում, յեթե նա ընդունված է ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի յերկու պալատների կողմից՝ յուրաքանչյուրի պարզ մեծամասնությամբ:

ՀՈԴՎԱԾ 40. ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընդունածորենքները հրապարակվում են միութենական Հանրապետությունների լեզուներով, ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահության նախագահի և քարտուղարի ստորագրությամբ:

ՀՈԴՎԱԾ 41. Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի նստաշրջաններն սկսվում և աշարտվում են միաժամանակ:

ՀՈԴՎԱԾ 42. Միության Խորհուրդն ընտրում է Միության Խորհրդի նախագահ և նրան յերկու տեղակալ:

ՀՈԴՎԱԾ 43. Ազգությունների Խորհրդն ընտրում է Ազգությունների Խորհրդի նախագահ և նրան յերկու տեղակալ:

ՀՈԴՎԱԾ 44. Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի նախագահները ղեկավարում են համապատասխան

պալատների նիստերը և տնօրինում են նրանց ներքին կարգութը:

ՀՈԴՎԱԾ 45. ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի յերկու պատասխանի համատեղ նիստերը հերթով վարում են Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի նախագահները:

ՀՈԴՎԱԾ 46. ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նստաշրջանները հրավիրում են ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահությունը տարեկան յերկու անգամ:

Վոչ հերթական նստաշրջանները հրավիրում են ԽՍՀ Միության Գերագույն Խորհրդի նախագահությունն իր հայեցական կամ միութենական հանրապետություններից մեկի պահանջով:

ՀՈԴՎԱԾ 47. Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի միջև տարածայնություն ծագելու դեպքում հարցը հանձնվում է լուծելու պարիսետային հիմունքներով՝ կազմված համաձայնեցուցիչ հանձնաժողովին: Յեթե համաձայնեցուցիչ հանձնաժողովը համերաշխ վորոշման չի հանդում կամ յեթե նրա վորոշումը չի բավարարում պալատներից մեկին, հարցը յերկրորդ անգամ քննվում է պալատներում: Յերկու պալատների համերաշխ վորոշման բաժակայության դեպքում ԽՍՀՄիության Գերագույն Խորհրդի նախագահությունն արձակում են ԽՍՀՄ Գերագույն Խորհրդը և նշանակում են նոր ընտրություններ:

ՀՈԴՎԱԾ 48. ԽՍՀՄ Գերագույն Խորհրդը յերկու պալատների համատեղ նիստում ընտրում են ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահություն՝ բազկացած ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահության նախագահից, նրա տասնեմել տեղակալներից, նախագահության քարտուղարից և նախագահության 24 անդամից:

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահությունը հաշվետու յե ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի առաջ իր ամբողջություններության համար:

ՀՈԴՎԱԾ 49. ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագահությունը՝

ա) հրավիրում են ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նստաշրջանները.

բ) մեկնաբանում են ԽՍՀՄ գործող որևէնքները, հրատարակում են հրամանագրերը.

գ) արձակում են ԽՍՀՄ Գերագույն Խորհրդը ԽՍՀՄ Սահմանադրության 47-րդ հոդվածի հիման վրա և նշանակում ենոր ընտրությունները.

դ) իր նախաձեռնությամբ կամ միութենական հանրապետություններից մեկի պահանջով կատարում են համաժողովրդական հարցում (ուժիքենդում):

ե) վերացնում են ԽՍՀՄ ժողովրդական կոմիսարների Խորհրդի և միութենական հանրապետությունների ժողովրդական կոմիսարների Խորհրդների վորոշումներն ու կարգադրությունները՝ որենքին նրանց անհամապատասխան լինելու դեպքում.

զ) ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նստաշրջանների միջև ընկած ժամանակաշրջանում, ԽՍՀՄ ժողովրդական կոմիսարների Խորհրդի նախագահի առաջադրմամբ, պաշտոնից ազատում և նշանակում են ԽՍՀՄ առանձին ժողովրդական կոմիսարների, հետագայում ներկայացնելով ԽՍՀՄ Գերագույն Խորհրդին ի հաստատություն.

ը) պարզեատորում են ԽՍՀՄ շքանշաններով և տալիս են ԽՍՀՄ պատվավոր կոչումներ.

թ) իրականացնում են ներման իրավունքը.

ժ) նշանակում և փոխում են ԽՍՀՄ զինված ուժերի բարձրագույն հրամանատարությունը.

ի) ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նստաշրջանների միջև ընկած ժամանակաշրջանում պատերազմի վիճակ ե հայտարարում ԽՍՀՄ վրա ռազմական հարձակում կատարվելու դեպքում, կամ այն դեպքում, յերբ անհրաժեշտ ե կատարել ազգեսիայից փոխադրամբար պաշտպանվելու միջազգային պայմանագրային պարտավորություններ.

լ) հայտարարում ե ընդհանուր և մասնակի զորահաւաք.

մ) ուստիֆիկացիայի յե յենթարկում միջազգային պայմանագրերը.

ն) նշանակում ե ԽՍՀՄ լիազոր ներկայացուցիչներ ու տարերկոյա պետություններում և հետ ե կանչում նրանց.

կ) ընդունում ե ոտարերկրյա պետությունների լրեն կից ակկրեդիտացիայի յենթարկված դիվանագիտական ներկայացուցիչների հավատարմագրերն ու հետկանչման թըղթերը:

Հ) հայտարարում ե պատերազմական դրություն առանձին վայրերում կամ ամբողջ ԽՍՀՄ-ում, յելնելով ԽՍՀՄ պաշտպանության կամ հասարակական կարգի և պետական անվտանգության ապահովման շահերից:

ՀՈԴՎԱԾ 50. Միության Խորհուրդը և Ազգությունների Խորհուրդն ընտրում են մանդատային հանձնաժողովներ, վորոնք ստուգում են յուրաքանչյուր պալատի պատգամագրների լիազորությունները:

Մանդատային հանձնաժողովի առաջադրմամբ՝ պալատները վորոշում են կամ ընդունել լիազորությունները, կամ քեկանել առանձին պատղամայլորների ընտրությունները:

ՀՈԴՎԱԾ 51. ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդը, յերբ անշրաժեց գտնի, նշանակում է քննիչ ու վերստուգիչ հանձնաժողովներ ամեն մի հարցի վերաբերյալ:

Բոլոր հիմնարկներն ու պաշտոնատար անձերը պարտավոր են կատարել այդ հանձնաժողովների պահանջները և նրանց ներկայացնել անհրաժեշտ նյութերն ու փաստաթըլթերը:

ՀՈԴՎԱԾ 52. ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդի պատղամավորը չի կարող դատական պատասխանատվության կանչվել կամ ձերբակալվել առանց ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդի համաձայնության, իսկ այն ժամանակաշրջանում, յերբ ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդի նստաշրջան չկա, — առանց ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդի նախագահության համաձայնության:

ՀՈԴՎԱԾ 53. ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդի լիազորությունները լրանալուց, կամ ժամկետից առաջ նրա արձակվելուց հետո, ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդի նախագահությունը պահպանում է իր լիազորությունները մինչև ԽՍՀՄ նորընտիր Գերագույն Խորհուրդի կողմից ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդի նոր նախագահություն կազմվելը:

ՀՈԴՎԱԾ 54. ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդի լիազորությունները լրանալուց հետո կամ ժամկետից առաջ նրա ար-

ձակվելու դեպքում ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդի նախագահությունը նշանակում է նոր ընտրություններ՝ ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդի լիազորությունները լրանալուց կամ նրա արձակվելու որից վոչ ուշ քան յերկու ամսվա ընթացքում։

ՀՈԴՎԱԾ 55. ԽՍՀՄ նորընտիր Գերագույն Խորհուրդի լիազորվում է ԽՍՀՄ նախակին կազմի Գերագույն Խորհուրդի նախագահության կողմից՝ ամենաուշը ընտրություններից մի ամիս հետո։

ՀՈԴՎԱԾ 56. ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդը յերկու պալատների համատեղ նիստում կազմում է ԽՍՀՄ Կառապալատների գործության կողմից ժողովրդական կոմիսարների Խորհարություն — ԽՍՀՄ ժողովրդական հոգածություն։

Գ Լ Ռ Ի Խ Ի Վ

ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ  
ԻՇԽԱԿԱՆԻԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՑՆ ՄԱՐՄՈՒՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 57. Միութենական հանրապետության պետական իշխանության բարձրագույն մարմինը Միութենական հանրապետության Գերագույն Խորհուրդն է։

ՀՈԴՎԱԾ 58. Միութենական հանրապետության Գերագույն Խորհուրդն ընտրում են հանրապետության քաղաքացիները ընորմ տարի ժամանակով։

Ներկայացուցչության նորմաները սահմանվում են միութենական հանրապետությունների Սահմանադրություններով։

ՀՈԴՎԱԾ 59. Միութենական հանրապետության Գերագույն Խորհուրդը հանրապետության միակ որենսդիր մարմինն է։

ՀՈԴՎԱԾ 60. Միութենական հանրապետության Գերագույն Խորհուրդը՝

ա) ընդունում է հանրապետության Սահմանադրությունը և փոփոխություններ ե մտցնում նրա մեջ՝ ԽՍՀՄ Սահմանադրության 16-րդ հոդվածին համապատասխան։

բ) հաստատում է իր կազմի մեջ գտնվող ավտոնոմ հան-

17



բապետությունների Սահմանադրությունները և վորոշում  
և նրանց տերիստորիայի սահմանները.

գ) Հաստատում է Հանրապետության ժողովրդատնտեսական պլանը և բյուջեն.

դ) ողտվում է Միութենական Հանրապետության դատական մարմինների կողմից դատապարտված քաղաքացիների ամփոփական իրավունքից:

ՀՈԴՎԾ 61. Միութենական Հանրապետության Գերագույն Խորհրդական ընտրում և Միութենական Հանրապետության Գերագույն Խորհրդական Խորհրդի Նախագահություն հետեւյալ կազմով. Միութենական Հանրապետության Գերագույն Խորհրդի Նախագահության նախագահ, նրա տեղակալներ, Նախագահության քարտուղար և Միութենական Հանրապետության Գերագույն Խորհրդի Նախագահության անդամներ:

Միութենական Հանրապետության Գերագույն Խորհրդի Նախագահության լիազորությունները վորոշում և Միութենական Հանրապետության Սահմանադրությամբ:

ՀՈԴՎԾ 62. Նիստերը վարելու համար Միութենական Հանրապետության Գերագույն Խորհրդին ընտրում և իր նախագահին և նրա տեղակալներին:

ՀՈԴՎԾ 63. Միութենական Հանրապետության Գերագույն Խորհրդը կազմում և Միութենական Հանրապետության Կառավարություն—Միութենական Հանրապետության ժողովրդական Կոմիսարների Խորհուրդ:

#### Գ Լ Ռ Խ Խ Վ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ-  
ՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ՀՈԴՎԾ 64. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության պետական իշխանության բարձրագույն դորժադիրը ու կարգադիրէ մարմինը ԽՍՀՄ ժողովրդական Կոմիսարների Խորհրդն է:

ՀՈԴՎԾ 65. ԽՍՀՄ ժողովրդական Կոմիսարների Խորհրդը պատասխանատու յե ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի առաջ և հաշվետու յե նրան, իսկ Գերագույն Խորհրդի նստաշրջանների միջև ընկած ժամանակաշրջանում՝ ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահության առաջ, վորին հաշվետու յի:

ՀՈԴՎԾ 66. ԽՍՀՄ ժողովրդական Կոմիսարների Խորհրդը գործող որենքների հիման վրա և ի կատարումն այդ որենքների՝ հատարակում և վորոշումներ ու կարգադրություններ և ստուգում և նրանց կատարումը:

ՀՈԴՎԾ 67. ԽՍՀՄ ժողովրդական Կոմիսարների Խորհրդի վորոշումների ու կարգադրությունների կատարումը պարտադիր և ԽՍՀՄ ամբողջ տերիտորիայում:

ՀՈԴՎԾ 68. ԽՍՀՄ ժողովրդական Կոմիսարների Խորհրդը:

ա) միավորում և ուղղություն և տալիս ԽՍՀՄ ընդհանուր-միութենական ու միութենական-Հանրապետական ժողովրդական Կոմիսարիաների և իր գերատեսչությամբ յենթակա տնտեսական ու կուլտուրական այլ հիմնարկների աշխատանքին.

բ) միջոցներ և ձեռք առնում ժողովրդատնտեսական պլանը, պետական բյուջեն իրականացնելու և վարկային-գրամական սիստեմն ամրացնելու համար.

գ) միջոցներ և ձեռք առնում հասարակական կարգնապահովելու, պետության շահերը պաշտպանելու և քաղացիների իրավունքները պահպանելու համար.

դ) իրականացնում և ընդհանուր զեկավարություն ու տարերից պետությունների հետ ունեցած հարաբերությունների բնագավառում.

ե) սահմանում և իրական զինվորական ծառայության կոչվելու յենթակա քաղաքացիների յուրաքանչյուր տարվա կոնտինգենտները, զեկավարում և յերկրի զինված ուժերի ընդհանուր շինարարությունը.

դ) անհրաժեշտության դեպքում կազմում և ԽՍՀ Միության ժողովրդական Կոմիսարների Խորհրդին կից տնտեսական, կուլտուրական պաշտպանության շինարարությունը.

թյան գործերի հատուկ կոմիտեներ և Գլխավոր վարչություններ:

ՀՈԴՎԱԾ 69. ԽՍՀՄ ժողովրդական կոմիսարների Խորհուրդն իրավունք ունի կառավարման ու տնտեսության՝ ԽՍՀՄ իրավասությանը վերապահված ճյուղերում կասեցնել Միութենական հանրապետությունների ժողովրդական կոմիսարների Խորհուրդների վորոշումներն ու կարգադրությունները և վերացնել ԽՍՀՄ ժողովրդական կոմիսարների հրամաններն ու հրահանգները:

ՀՈԴՎԱԾ 70. ԽՍՀՄ ժողովրդական կոմիսարների Խորհուրդը կազմվում է ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի կողմից հետեւյալ կազմով.

ԽՍՀՄ ժողովրդական կոմիսարների Խորհրդի նախագահ:

ԽՍՀՄ ժողովրդական կոմիսարների Խորհրդի նախագահի տեղակալներ.

ԽՍՀՄ Պետական պլանային հանձնաժողովի նախագահ.

Խորհրդային վերահսկողության հանձնաժողովի նախագահ.

ԽՍՀՄ ժողովրդական կոմիսարներ.

Արվեստի գործերի կոմիտեյի նախագահ.

Բարձրագույն դպրոցի գործերի կոմիտեյի նախագահ.

Պետական Բանկի Վարչության նախագահ:

ՀՈԴՎԱԾ 71. ԽՍՀՄ կառավարությունը կամ ԽՍՀՄ ժողովրդական կոմիսարը, վորոնց ուղղված է ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավորի հարցապնդումը, պարտավոր են ամենաուշը յերեք որվա ընթացքում գրավոր կամ բանավոր պատասխան տալ համապատասխան պալատում:

ՀՈԴՎԱԾ 72. ԽՍՀՄ ժողովրդական կոմիսարները ղեկավարում են պետական կառավարման այն ճյուղերը, վորոնք մտնում են ԽՍՀՄ իրավասության մեջ:

ՀՈԴՎԱԾ 73. ԽՍՀՄ ժողովրդական կոմիսարները համապատասխան ժողովրդական կոմիսարիատների իրավասության սահմաններում հրատարակում են հրամաններ ու հրահանգներ՝ գործող որևէնքների, ինչպես նաև ԽՍՀՄ ժող-

ովովրդական կոմիսարների Խորհրդի վորոշումների ու կարգադրությունների հիման վրա և ի կատարումն այդուժենքների, վորոշումների ու կարգադրությունների, և ըստուգում են նրանց կատարումը:

ՀՈԴՎԱԾ 74. ԽՍՀՄ ժողովրդական կոմիսարիատները մինում են կամ ընդհանուր-միութենական, կամ միութենական-հանրապետական:

ՀՈԴՎԱԾ 75. Ընդհանուր-միութենական ժողովրդական կոմիսարիատները պետական կառավարման իրենց հանձնարարված ճյուղը ԽՍՀՄ ամբողջ տերիտորիայում ղեկավարում են կամ անմիջականորեն, կամ իրենց կողմից նշանակված մարմինների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 76. Միութենական-հանրապետական ժողովրդական կոմիսարիատները պետական կառավարման իրենց հանձնարարված ճյուղը ղեկավարում են, վորագես կանոն, միութենական հանրապետությունների նույնանուն ժողովրդական կոմիսարիատների միջոցով և անմիջականորեն կատարարում են միայն վորոշ սահմանափակ թվով ձեռնարկություններ՝ ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի նախագության կողմից հաստատվող ցուցակով:

ՀՈԴՎԱԾ 77. Ընդհանուր-միութենական ժողովրդական կոմիսարիատների թվին են պատկանում հետեւյալ ժողովրդական կոմիսարիատները՝

Պաշտպանության.

Արտաքին գործերի.

Արտաքին առևտուրի.

Հաղորդակցության ճանապարհների.

Կառի.

Զբային տրանսպորտի.

Ծանր արդյունաբերության.

Պաշտպանության արդյունաբերության.

Մեքենաշինության.

Ռազմա-օպերային նախատեսումի.

Մեթորումների:

ՀՈԴՎԱԾ 78. Միութենական-հանրապետական ժող-

վըրդական կոմիսարիատների թվին են պատկանում հետեւ-  
վյալ ժողովրդական կոմիսարիատները.

Սննդի արդյունաբերության.  
Թեթև արդյունաբերության.

Անտառային արդյունաբերության.  
Հողագործության.

Հացահատիկային ու անասնաբուծական խորհանտեսությունների.  
Ֆինանսների.

Առևտրի.

Ներքին դորձերի.  
Արդարադատության.

Առողջապահության:

#### Գ Լ Ո Ւ Խ Վ Ի

ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 79. Միութենական Հանրապետության պետական իշխանության բարձրագույն գործադիր և կարգադրիչ մարմինը Միութենական Հանրապետության ժողովրդական կոմիսարների Խորհուրդն է:

ՀՈԴՎԱԾ 80. Միութենական Հանրապետության ժողովրդական կոմիսարների Խորհուրդը պատասխանատու յե Միութենական Հանրապետության Գերագույն Խորհրդի առաջ և հաշվետու յե նրան, իսկ Միութենական Հանրապետության Գերագույն Խորհրդի նստաշրջանների միջև ընկած ժամանակաշրջանում՝ Միութենական Հանրապետության Գերագույն Խորհրդի նախագահության առաջ, վորին հաշվետու յե:

ՀՈԴՎԱԾ 81. Միութենական Հանրապետության ժողովրդական կոմիսարների Խորհուրդը հաստարակում ե վորոշումներ ու կարգադրություններ՝ ԽՍՀՄ ու Միութենական Հանրապետության գործող որենքների, ԽՍՀՄ ժողո-

վըրդական կոմիսարների Խորհրդի վորոշումների ու կարգադրությունների հիման վրա և ի կատարումն այդ որենքների, վորոշումների ու կարգադրությունների, և ստուգում և նրանց կատարումը:

ՀՈԴՎԱԾ 82. Միութենական Հանրապետության ժողովրդական կոմիսարների Խորհուրդն իրավունք ունի կամեցնելու ավտոնոմ Հանրապետությունների ժողովրդական կոմիսարների Խորհուրդների վորոշումներն ու կարգադրությունները և վերացնելու յերկրամասերի, մարզերի ու ավտոնոմ մարզերի աշխատավորների պատգամավորների Խորհուրդների գործադիր կոմիտեների վորոշումներն ու կարգադրությունները:

ՀՈԴՎԱԾ 83. Միութենական Հանրապետության ժողովրդական կոմիսարների Խորհուրդը կազմվում է Միութենական Հանրապետության Գերագույն Խորհրդի կողմից հետեւյալ կազմով՝

Միութենական Հանրապետության ժողովրդական կոմիսարների Խորհրդի նախագահ։

Նախագահի տեղակալներ.

Պետական պլանային հանձնաժողովի նախագահ։

Ժողովրդական կոմիսարներ՝

Սննդի արդյունաբերության.

Թեթև արդյունաբերության.

Անտառային արդյունաբերության.

Հողագործության.

Հացահատիկային ու անասնաբուծական խորհանտեսությունների.

Ֆինանսների.

Առևտրի.

Ներքին դորձերի.

Արդարադատության.

Առողջապահության.

Լուսավորության.

Տեղական արդյունաբերության.

Կոմունալ տնտեսության.

Սոցիալական ապահովության.

ԱՎՏՈՆՈՄ ԽՈՐՃՐԴԱՅԻՆ ՍՈՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ  
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՑՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Արվեստի գործերի Վարչության պետ.  
Հնդկանուրմիութենական ժողովրդական կոմիսա-  
րիատների լիազորներ.

ՀՈԴՎԱԾ 84. Միութենական հանրապետության ժողո-  
վը ըրդական կոմիսարները ղեկավարում են պետական կառա-  
վարման այն ճյուղերը, վորոնք վերաբերում են Միութե-  
նական հանրապետության իրավասությանը:

ՀՈԴՎԱԾ 85. Միութենական հանրապետության ժողո-  
վը ըրդական կոմիսարները համապատասխան ժողովրդական  
կոմիսարիատների իրավասության սահմաններում հաստա-  
րակում են հրամաններ ու հրահանգներ՝ ԽՍՀՄ և Միութե-  
նական հանրապետության որենքների, ԽՍՀՄ և Միութե-  
նական հանրապետության ժողովրդական կոմիսարների  
Խորհրդի վորոշումների ու կարգադրությունների, ԽՍՀՄ  
միութենական-հանրապետական ժողովրդական կոմիսա-  
րիատների հրամանների ու հրահանգների հիման վրա և ի  
կատարումն դրանց:

ՀՈԴՎԱԾ 86. Միութենական հանրապետության ժողո-  
վը ըրդական կոմիսարիատները լինում են միութենական-հան-  
րապետական կամ հանրապետական:

ՀՈԴՎԱԾ 87. Միութենական-հանրապետական ժողո-  
վը ըրդական կոմիսարիատները ղեկավարում են պետական-  
կառավարման իրենց հանձնարարված ճյուղը, յենթարկվե-  
լով ինչպես Միութենական հանրապետության ժողովրդա-  
կան կոմիսարների Խորհրդին, այնպես ել ԽՍՀՄ համապա-  
տասխան միութենական-հանրապետական ժողովրդական  
կոմիսարիատին:

ՀՈԴՎԱԾ 88. Հանրապետական ժողովրդական կոմի-  
սարիատները ղեկավարում են պետական կառավարման ի-  
րենց հանձնարարված ճյուղը, յենթարկվելով անմիջակա-  
նորեն Միութենական հանրապետության ժողովրդական  
կոմիսարների Խորհրդին:

ՀՈԴՎԱԾ 89. Ավտոնոմ հանրապետության պետական  
իշխանության բարձրագույն մարմինը ԱԽՍՀ Գերագույն  
Խորհրդին է:

ՀՈԴՎԱԾ 90. Ավտոնոմ հանրապետության Գերագույն  
Խորհրդին ընտրում են հանրապետության քաղաքացիները  
չորս տարի ժամանակով, ներկայացուցչության այն նորմա-  
ներով, վոր սահմանվում են Ավտոնոմ հանրապետության  
Սահմանադրությամբ:

ՀՈԴՎԱԾ 91. Ավտոնոմ հանրապետության Գերագույն  
Խորհրդին ԱԽՍՀ միակ որենադիր մարմինն է:

ՀՈԴՎԱԾ 92. Յուրաքանչյուր Ավտոնոմ հանրապետու-  
թյուն ունի իր Սահմանադրությունը, վորը հաշվի յե առ-  
նում Ավտոնոմ հանրապետության առանձնահատկություն-  
ները և կառուցված ե Միութենական հանրապետության  
Սահմանադրությանը լիովին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 93. Ավտոնոմ հանրապետության Գերագույն  
Խորհրդին ընտրում է Ավտոնոմ հանրապետության Գերա-  
գույն Խորհրդի նախագահություն և կազմում է Ավտոնոմ  
հանրապետության ժողովրդական կոմիսարների Խորհրդ՝  
համաձայն իր Սահմանադրության:

ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 94. Յերկրամասերում, մարզերում, ավտո-  
նոմ մարզերում, ոկրուգներում, շրջաններում, քաղաքնե-  
րում, գյուղերում (ստանիցաներում, գյուղակներում, խո-  
րում):

տորիներում, դշլաղներում, առւլներում) պետական իշխանության մարմիններ հանդիսանում են աշխատավորների պատգամավորների Խորհուրդները:

ՀՈԴՎԱԾ 95. Աշխատավորների պատգամավորների յերկրամասային, մարզային, ավտոնոմ մարզերի, ոկրուգային, շրջանային, քաղաքային, գյուղական (ստանիցաների, գյուղակների, խուտորների, դշլաղների, առւլների) Խորհուրդներն ընտրում են համապատասխան յերկրամասի, մարզի, ավտոնոմ մարզի, ոկրուգի, շրջանի, քաղաքի, գյուղի աշխատավորները յերկու տարի ժամանակով:

ՀՈԴՎԱԾ 96. Աշխատավորների պատգամավորների Խորհուրդներում ներկայացուցչության նորմաները վորոշում են միութենական հանրապետությունների Սահմանադրություններով:

ՀՈԴՎԱԾ 97. Աշխատավորների պատգամավորների Խորհուրդները զեկավարում են կառավարման իրենց յենթակա մարմինների գործունեյությունը, ապահովում են պետական կարգի պահպանումը, որենքների կատարումը և քաղաքացիների իրավունքների պահպանումը, զեկավարում են տեղական անտեսական ու կուլտուրական շինարարությունը, սահմանում են տեղական բյուջեն:

ՀՈԴՎԱԾ 98. Աշխատավորների պատգամավորների խորհուրդները վորոշումներ են ընդունում և կարգադրություններ են անում ԽՍՀՄ և Միութենական հանրապետության որենքներով իրենց տրված իրավունքների սահմաներում:

ՀՈԴՎԱԾ 99. Աշխատավորների պատգամավորների յերկրամասային, մարզային, ավտոնոմ մարզերի, ոկրուգային, շրջանային, քաղաքային ու գյուղական Խորհուրդների գործադիր ու կարգադրիչ մարմիններն են նրանց կողմից ընտրված գործադիր կոմիտեները՝ կազմված նախագահից, նրա տեղակալներից, քարտուղարից ու անդամներից:

ՀՈԴՎԱԾ 100. Փոքր բնակավայրերում աշխատավորների պատգամավորների գյուղական խորհուրդների գործադիր ու կարգադրիչ մարմինը, միութենական հանրապետությունների Սահմանադրություններին համապատասխան,

նրանց կողմից ընտրվող նախագահը, տեղակալը և քարտուղարն են:

ՀՈԴՎԱԾ 101. Աշխատավորների պատգամավորների Խորհուրդների գործադիր մարմիններն անմիջականորեն հաշվետու յեն ինչպես աշխատավորների պատգամավորների այն Խորհրդի առաջ, վորոն ընտրել են նրանց, այնպես ել աշխատավորների պատգամավորների վերադաս Խորհրդի գործադիր մարմնի առաջ:

#### Գ Լ Ո Ւ Խ

#### ԴԱՏԱՐԱՆ ՅԵՎ ԴԱՏԱԽԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾ 102. Արդարադատությունը ԽՍՀՄ-ում իրականացնելում են ԽՍՀՄ Գերագույն Դատարանի, միութենական հանրապետությունների Գերագույն Դատարանների, յերկրամասային ու մարզային դատարանների, ավտոնոմ հանրապետությունների ու ավտոնոմ մարզերի դատարանների, ոկրուգային դատարանների, ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդի, ոկրուգային դատարանների, ԽՍՀՄ Հատուկ դատարանների և ժողովրդական դատարանների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 103. Գործերի քննարկումը բոլոր դատարաններում կատարվում է ժողովրդական ատենակալների մասնակցությամբ, բացի որենքով հատկապես նախատեսված դեպքերից:

ՀՈԴՎԱԾ 104. ԽՍՀՄ Գերագույն Դատարանը բարձրագույն դատական մարմինն է հանդիսանում: ԽՍՀՄ Գերագույն դատական մարմինը վրա դրվում է ԽՍՀՄ իության և միութենական հանրապետությունների բոլոր դատական մարմինների դատական գործունեյության հսկողությունը:

ՀՈԴՎԱԾ 105. ԽՍՀՄ Գերագույն Դատարանը և ԽՍՀՄ հատուկ դատարաններն ընտրվում են ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի կողմից հինգ տարի ժամանակով:

ՀՈԴՎԱԾ 106. Միութենական հանրապետությունների Գերագույն Դատարաններն ընտրվում են միութենական

Հանրապետությունների Գերագույն Խորհուրդների կողմից  
Հինգ տարի ժամանակով:

ՀՈԴՎԱԾ 107. Ավտոնոմ հանրապետությունների Գե-  
րագույն Դատարաններն ընտրվում են ավտոնոմ հանրա-  
պետությունների Գերագույն Խորհուրդների կողմից հինգ  
տարի ժամանակով:

ՀՈԴՎԱԾ 108. Յերկրամասային ու մարզային դատա-  
րանները, ավտոնոմ մարզերի դատարանները, ոկրուգային  
դատարաններն ընտրվում են աշխատավորների պատգամա-  
վորների յերկրամասային, մարզային կամ ոկրուգային  
Խորհուրդների կողմից կամ ավտոնոմ մարզերի աշխատա-  
վորների պատգամավորների Խորհուրդների կողմից հինգ  
տարի ժամանակով:

ՀՈԴՎԱԾ 109. Ժողովրդական դատարաններն ընտրում  
են չքաղաքացիները՝ ընդհանուր, ուղղակի և հավա-  
սար ընտրական իրավունքի հիման վրա՝ դադանի քվեար-  
կությամբ—յերեք տարի ժամանակով:

ՀՈԴՎԱԾ 110. Դատավարությունը կատարվում է մի-  
ութենական կամ ավտոնոմ հանրապետության կամ ավտո-  
նոմ մարզի լեզվով՝ այդ լեզվին չտիրապետող անձերի հա-  
մար ապահովերով լիակատար ծանոթացումը դորձինյութե-  
րին թարգմանի միջոցով, ինչպես նաև դատարանում մայ-  
րենի լեզվով հանդես դալու իրավունքը:

ՀՈԴՎԱԾ 111. Գործերի քննությունը ԽՍՀՄ բոլոր դա-  
տարաններում, վորչափով որենքը բացառություններ չի  
նախատեսում, կատարվում է դոնքաց՝ ապահովելով մե-  
ղադրյալի պաշտպանվելու իրավունքը:

ՀՈԴՎԱԾ 112. Դատավորներն անկախ են և միայն  
որենքին են յենթարկվում:

ՀՈԴՎԱԾ 113. Բոլոր ժողովրդական կոմիսարիատների  
և նրանց գերատեսչությանը յենթակա հիմնարկների, ինչ-  
պես և առանձին պաշտոնատար անձերի, նույնպես և ԽՍՀՄ  
քաղաքացիների կողմից որենքները ճշգրիտ կերպով կատա-  
րելու բարձրագույն հսկողությունը դրվում է ԽՍՀՄ Դա-  
տախագիր վրա:

ՀՈԴՎԱԾ 114. ԽՍՀՄ Դատախագը նշանակվում է

ԽՍՀՄ Գեագույն Խորհրդի կողմից յոթ տարի ժամանակով:  
ՀՈԴՎԱԾ 115. Հանրապետական, յերկրամասային,  
մարզային դատախագները, ինչպես նաև ավտոնոմ հանրա-  
պետությունների ու ավտոնոմ մարզերի դատախագները,  
մանակվում են ԽՍՀՄ Դատախագիր կողմից հինգ տարի ժա-  
մանակով:

ՀՈԴՎԱԾ 116. Ոկրուգային, շրջանային և քաղաքային  
դատախագները նշանակվում են միութենական հանրապե-  
տությունների դատախագների կողմից՝ ԽՍՀ Միության  
Դատախագիր հաստատմամբ—հինգ տարի ժամանակով:

ՀՈԴՎԱԾ 117. Դատախագության մարմիններն իրենց  
ֆունկցիաներն իրականացում են անկախ տեղական վորեն  
մարմնից, յենթարկվելով միայն ԽՍՀՄ Դատախագին:

#### Գ Լ Ռ Խ Խ Խ

ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 118. ԽՍՀՄ քաղաքացիներն ունեն աշխատան-  
քի իրավունք, այսինքն՝ ապահովված աշխատանք ստանալու  
իրավունք, նրանց աշխատանքը վարձատըելով նրա քանակի  
ու վորակի համապատասխան:

Աշխատանքի իրավունքն ապահովվում է ժողովրդական  
տնտեսության սոցիալիստական կազմակերպմամբ, խոր-  
հարդային հասարակության արտադրողական ուժերի անշեղ  
համամբ, տնտեսական ճգնաժամերի հնարավորության վե-  
րացմամբ և գործազրկության լիկիդացիայով:

ՀՈԴՎԱԾ 119. ԽՍՀՄ քաղաքացիներն ունեն հանգստի  
իրավունք:

Հանգստի իրավունքն ապահովվում է բանվորների ճշն-  
շող մեծամասնության համար աշխատանքային որը կրծա-  
ռելով—հասցնելով 7 ժամի, բանվորների ու ծառայողների  
տեղով առաջարկությունը ամեն տարի տրվող արձակուրդ, վորի  
համար սահմանելով ամեն տարի տրվող արձակուրդ, աշխ-  
աթացքում պահպանվում է նրանց աշխատավարձը, աշխ-

տավորներին սպասարկելու համար սանատորիաների, հանգըստյան տների, ակումբների լայն ցանց տրամադրելով։

ՀՈԴՎԱԾ 120. ԽՍՀՄ քաղաքացիները ծերության, ինչպես նաև հիմանդրության և աշխատունակությունը կորցնելու դեպքում ունեն նյութական ապահովության իրավունք։

Այդ իրավունքն ապահովվում է բանվորների ու ծառայողների համար պետության հաշվին կատարվող սոցիալական ապահովագրության լայն ծավալմամբ, աշխատավորներին ձրի բժշկական ոգնություն ցույց տալով, աշխատավորներին ոգտագործման համար կուրորտների լայն ցանց տրամադրելով։

ՀՈԴՎԱԾ 121. ԽՍՀՄ քաղաքացիներն ունեն կրթության իրավունք։

Այդ իրավունքն ապահովվում է ընդհանուր-պարտադիր տարրական կրթությամբ, ձրի կրթությամբ՝ ներառյալ բարձրագույն կրթությունը, բարձրագույն դպրոցում սովորողների ճնշող մեծամասնությանը տրվող պետական թոշակների սիստեմով, դպրոցներում մայրենի լեզվով ուսուցանելով, գործարաններում, խորհանուելուն, մեքենատրակտորային կայաններում ու կոլտնտեսություններում աշխատավորների համար ձրի արտադրական, տեխնիկական ու ագրոնոմիական ուսուցում կազմակերպելով։

ՀՈԴՎԱԾ 122. Կնոջը ԽՍՀՄ-ում տղամարդուն հավասար իրավունքներ են տրվում տնտեսական, պետական, կուլտուրական ու հասարակական-քաղաքական կյանքի բոլոր բնագավառներում։

Կանանց այդ իրավունքների իրականացման հասարակությունն ապահովվում է կնոջը տղամարդուն հավասար իրավունք տալով աշխատանքի, աշխատանքի վարձատրության, հանգստի, սոցիալական ապահովագրության ու կըրթության ասպարեզում, մոր ու մանկան շահերի պետական պահպանությամբ, կնոջը հղության ժամանակ արձակուրդ տալով՝ պահպանելով աշխատավարձը, ծննդատների, մանկամուրների ու մանկապարտեզների լայն ցանցով։

ՀՈԴՎԱԾ 123. ԽՍՀՄ քաղաքացիների իրավահավասարությունը տնտեսական, պետական, կուլտուրական ու հա-

սարակական-քաղաքական կյանքի բոլոր բնագավառներում, անկախ նրանց ազգությունից ու ռասայից, հանդիսանում է անխախտ որենք։

Իրավունքների վորեկցի ուղղակի կամ անուղղակի սահմանափակումը կամ, ընդհակառակը, ռասայական ու ազգային պատկանելությունից յենելով՝ քաղաքացիների համար ուղղակի կամ անուղղակի առավելություններ սահմանելը, ինչպես նաև ռասայական ու ազգային բացառիկության կամ ատելության ու արհամարհանքի ամեն տեսակ քարոզ-պատժվում են որենքով։

ՀՈԴՎԱԾ 124. Քաղաքացիների համար խղճի ազատություն ապահովելու նպատակով յեկեղեցին ԽՍՀ Միության մեջ բաժանված ե պետությունից և դպրոցը՝ յեկեղեցուց։ Կրոնական պաշտամունքների կատարման ազատությունը և հակակրօնական պրոպաղանդայի ազատությունը ճանաչվում ե բոլոր քաղաքացիների համար։

ՀՈԴՎԱԾ 125. Աշխատավորների շահերին համապատասխան և սոցիալիստական կարգերն ամրացնելու նպատակով ԽՍՀՄ քաղաքացիների համար որենքով ապահովվում է։

- ա) խոսքի ազատություն,
- բ) մամուլի ազատություն,
- գ) ժողովների ու միախնդների ազատություն,
- դ) փողոցային յերթերի ու ցույցերի ազատություն։

Քաղաքացիների այդ իրավունքներն ապահովվում են՝ աշխատավորներին և նրանց կազմակերպություններին տրամադրելով տպարաններ, թղթի պաշարներ, հասարակական շենքեր, փողոցներ, կապի միջոցներ և աշխատավորների այդ իրավունքներն իրականացնելու համար անհրաժեշտ այլ նյութական պայմաններ։

ՀՈԴՎԱԾ 126. Աշխատավորների շահերին համապատասխան և ժողովրդական մասսաների կազմակերպական ինքնազործունեյությունն ու քաղաքական ակտիվությունը զարգացնելու նպատակով ապահովվում է ԽՍՀՄ քաղաքացիների իրավունքը՝ միավորվելու հասարակական կազմակերպությունների մեջ՝ արհեստակցական միություններ,

կոռպերատիվ միավորումներ, յերիտասարդության կազմակերպություններ, սպորտային և պաշտպանական կազմակերպություններ, կուլտուրական, տեխնիկական ու գիտական ընկերություններ. իսկ բանվոր գասակարգի շարքերից ու աշխատավորների մյուս խավերից ամենից ավելի ակտիվ ու գիտակեց քաղաքացիները համախմբվում են համամեթենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության մեջ, վորն աշխատավորների առաջավոր ջոկատն ե՝ սոցիալիստական հասարակակարգն ամրացնելու և զարգացնելու համար նրանց մղած պայքարում և աշխատավորների բոլոր, ինչպես հասարակական, այնպես և պետական կազմակերպությունների ղեկավար կորին և ներկայացնում:

ՀՈԴՎԱԾ 127. ԽՍՀՄ քաղաքացիների համար ապահովվում և անձի անձեռնմխելություն: Վոչ վոք չի կարող չերրակալվել այլ կերպ, քան դատարանի վորոշմամբ կամ դատախազի սանկցիայով:

ՀՈԴՎԱԾ 128. Քաղաքացիների բնակարանի անձեռնմխելությունն ու նամակադրության գաղտնիությունը պահպանվում են որենքով:

ՀՈԴՎԱԾ 129. ԽՍՀՄ-ն ապաստանի իրավունք և վերապահում ոտարերկրյա այն քաղաքացիներին, վորոնք հետապնդվում են աշխատավորների շահերը պաշտպանելու, կամ գիտական գործունեյության, կամ աղքային-ազատագրական պայքարի համար:

ՀՈԴՎԱԾ 130. ԽՍՀՄ յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր և պահպանել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Սահմանադրությունը, կառարել որենքները, աշխատանքի կարգապահություն պահպանել, ազնվորեն վերաբերվել դեպի հասարակական պարտքը, հարգել սոցիալիստական համակեցության կանոնները:

ՀՈԴՎԱԾ 131. ԽՍՀՄ յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր և պահպանել ու ամրացնել հանրային, սոցիալիստական սեփականությունը, վորպես խորհրդային կարգերի որբագան ու անձեռնմխելի հիմք, վորպես հայրենիքի հարըստության ու հզորության աղբյուր, վորպես բոլոր աշխատավորների ունեոր ու կուլտուրական կյանքի աղբյուր:

Հանրային, սոցիալիստական սեփականության գեմ վոտնձգություն անող անձերը ժողովրդի թշնամիներ են:

ՀՈԴՎԱԾ 132. Ընդհանուր զինվորական պարտականությունն որենք և հանդիսանում:

Զինվորական ծառայությունը Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակում՝ ԽՍՀՄ քաղաքացիների պատվավոր պարտականությունն ե:

ՀՈԴՎԱԾ 133. Հայրենիքի պաշտպանությունը ԽՍՀՄ յուրաքանչյուր քաղաքացու սրբազն պարտքն ե: Հայրենիքին դավաճանելը—յերդումը խախտելը, թշնամու կողմնանցնելը, պետության ուղմական հզորությանը վնաս հասցնելը, լրտեսությունը—պատժվում են որենքի ամբողջ խստությամբ, վորպես ամենածանր չարագործություն:

#### Գ Լ Ռ Խ Խ Խ Խ

### ԸՆՏՐԱԿԱՆ ՍԻՍՏԵՄԸ

ՀՈԴՎԱԾ 134. Աշխատավորների պատվամավորների բոլոր Խորհրդադիրի—ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի, միութենական հանրապետությունների Գերագույն Խորհրդադիրի, աշխատավորների պատվամավորների յերկրամասային ու մարզային Խորհրդադիրի, ավտոնոմ հանրապետությունների Գերագույն Խորհրդադիրի, ավտոնոմ մարզերի աշխատավորների պատվամավորների Խորհրդադիրի, աշխատավորների պատվամավորների ոկրուգային, շրջանային, քաղաքային ու գյուղական (ստանիցայի, գյուղակի, խուտորի, դշլաղի, առւլի) Խորհրդադիրի—պատվամավորների ընտրությունները կատարում են ընտրողներն ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ դադանի քվեարկությամբ:

ՀՈԴՎԱԾ 135. Պատվամավորների ընտրություններն ընդհանուր են. ԽՍՀՄ բոլոր քաղաքացիները, վորոնց 18 տարին լրացել ե, անկախ ուսայական ու ազգային պատվական ելությունից, դավանանքից, կրթական ցենզից, նստակեցությունից, սոցիալական ծագումից, գույքային գրու-

թյունից և անցյալ գործունեյությունից, իրավունք ունեն  
մասնակցելու պատղամավորների ընտրություններին և  
ընտրվելու, բացի խելագարներից և այն անձերից, վորոնք  
դատարանի կողմից դատապարտված են՝ ընտրական իրա-  
վունքների գրկումով:

ՀՈԴՎԱԾ 136. Պատղամավորների ընտրությունները  
հավասար են. յուրաքանչյուր քաղաքացի ունի մեկ ձայն,  
բոլոր քաղաքացիներն ընտրություններին մասնակցում են  
հավասար հիմունքներով:

ՀՈԴՎԱԾ 137. Կանայք ընտրելու և ընտրվելու իրա-  
վունքից ոգտվում են տղամարդկանց հետ հավասարապես:

ՀՈԴՎԱԾ 138. Կարմիր Բանակի շարքերում գտնվող  
քաղաքացիներն ընտրելու և ընտրվելու իրավունքից ոգտ-  
վում են բոլոր քաղաքացիների հետ հավասարապես:

ՀՈԴՎԱԾ 139. Պատղամավորների ընտրություններն  
ուղղակի յեն. աշխատավորների պատղամավորների բոլոր  
Խորհուրդների ընտրությունները, սկսած աշխատավորների  
պատղամավորների գյուղական ու քաղաքային Խորհրդից  
ընդհանուր մինչև ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդը, քաղաքացի-  
ները կատարում են անմիջականորեն, ուղղակի ընտրու-  
թյունների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 140. Պատղամավորների ընտրության ժամա-  
նակ քվեարկությունը գաղտնի յե:

ՀՈԴՎԱԾ 141. Բնտրությունների ժամանակ թեկնա-  
ծուներն առաջադրվում են ըստ ընտրական ոկրուդների:

Թեկնածուներ առաջադրելու իրավունքն ապահովվում  
է աշխատավորների հասարակական կազմակերպություննե-  
րի ու ընկերությունների — կոմունիստական կուսակցական  
կազմակերպությունների, արհեստական միություննե-  
րի, կոոպերատիվների, յերիտասարգության կազմակերպու-  
թյունների, կուլտուրական ընկերությունների — համար:

ՀՈԴՎԱԾ 142. Յուրաքանչյուր պատղամավոր պարտա-  
վոր և ընտրողների առաջ հաշիվ տալ իր աշխատանքի և  
աշխատավորների պատղամավորների Խորհրդի աշխատան-  
քի մասին և կարող եր իր վոր լինի հետ կանչվել

ընտրողների մեծամասնության վորոշմամբ, որենքով սահ-  
մանված կարգով:

Գ Լ ՈՒԽ Խ Ա Ա

ԳԵՐԲԸ, ԴՐՈՇԱԿԸ, ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ

ՀՈԴՎԱԾ 143. Խորհրդային Սոցիալիստական Հանրա-  
պետությունների Միության պետական գերբը բաղկացած  
է մանղաղից ու մուրճից՝ յերկրագնդի վրա, վորը պատ-  
կերված է արեգակի ճառագայթների մեջ ու շրջանակված  
հասկերով և կրում է միութենական հանրապետություննե-  
րի լեզուներով գրված «Պրոլետարներ բոլոր յերկրների,  
միացե՛ք» մակագրությունը։ Գերբի վերևում կա հնգաթև  
աստղ։

ՀՈԴՎԱԾ 144. Խորհրդային Սոցիալիստական Հանրա-  
պետությունների Միության պետական դրոշակը բաղկա-  
ցած է կարմիր կտորից, վորի վերին անկյունում՝ կոթի  
մու նկարված են վոսկեհուռ մանղաղ ու մուրճ և նրանց  
վերևում՝ հնդաթե կարմիր աստղ՝ շրջանակված վոսկեհուռ  
յերիզով։ Լայնության և յերկարության հարաբերությունն  
ե՝ 1 : 2։

ՀՈԴՎԱԾ 145. Խորհրդային Սոցիալիստական Հանրա-  
պետությունների Միության մայրաքաղաքը Մոսկվա քա-  
ղաքն է։

Գ Լ ՈՒԽ Խ Ա Ա Ա

ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԿԱՐԳԸ

ՀՈԴՎԱԾ 146. ԽՍՀՄ Մահմանադրության փոփոխումը  
կատարվում է միայն ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի վորոշ-  
մամբ՝ ընդունված նրա պալատներից յուրաքանչյուրի  
ձայների առնվազն յերկու յերրորդի մեծամասնությամբ։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՈՐՀԻՇԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԸՆԴՐՈՒԹՅՈՒՆԸ (ՀԻՄՆԱԿԱՆ ՈՐԵՆՔԸ)

	Եջ
Գլուխ I. Հասարակական կառուցվածքը . . . . .	5
Գլուխ II. Պետական կառուցվածքը . . . . .	7
Գլուխ III. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության պետական իշխանության բարձրագույն մարմինները . . . . .	12
Գլուխ IV. Միութենական հանրապետությունների պետական իշխանության բարձրագույն մարմինները . . . . .	17
Գլուխ V. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության պետական կառավարման մարմինները . . . . .	18
Գլուխ VI. Միութենական հանրապետությունների պետական կառավարման մարմինները . . . . .	22
Գլուխ VII. Ավտոնոմ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների պետական իշխանության բարձրագույն մարմինները . . . . .	25
Գլուխ VIII. Պետական իշխանության տեղական մարմինները . . . . .	25
Գլուխ IX. Դատարան և դատախազություն . . . . .	27
Գլուխ X. Քաղաքացիների հիմնական իրավունքներն ու պարտականությունները . . . . .	29
Գլուխ XI. Ընտրական սիստեմը . . . . .	33
Գլուխ XII. Գերբը, դրոշակը, մայրաքաղաքը . . . . .	35
Գլուխ XIII. Սահմանադրությունը փոփոխելու կարգը	35

ՀՀ Ազգային գրադարան



NL0207791

257

34.708

ԳԻՒԸ 40 Կ.

КОНСТИТУЦИЯ  
(Основной Закон) Союза ССР  
(На армянском языке)  
Госиздат—Издательство полит. литературы  
Ереван 1938